ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 24 դեկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Վ.Հովհաննիսյանի

Անդամակցությամբ՝ Զ.Ղուկասյանի և Կ. Բալայանի

Քննության առնելով քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Ռուբեն Թորոսյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 8-րդ կետի առաջին նախադասությամբ ձևակերպված դրույթի սահմանադրականությունը: Վիճարկվող դրույթում նշվում է, որ «Անհատական դիմումների քննությունը մերժելու մասին սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգով ընդունված որոշումը պետք է լինի պատճառաբանված»:

Ռ.Թորոսյանը իր դիմումում պնդում է, որ «անվիճելի է նաև, որ անհատական դիմումների քննությունը մերժելու մասին ՍԴ որոշումները նույնպես պետք է լինեն հիմնավորված: Իսկ «լինել պատճառաբանված» հասկացությունն, ինչպես երևում է լայն ճանապարհ է բացում սուբյեկտիվ մոտեցումների համար»:

Նկատի ունենալով, որ դատական կազմի որոշումը ընդունվում է ՀՀ սահմանադրական դատարանի անունից և այն վերջնական ակտ է, դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության

101-րդ հոդվածի 6-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով, Սահմանադարական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

1. Քաղ Ռ.Թորոսյանի դիմումը՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 8-րդ կետի առաջին նախադասությամբ ձևակերպված դրույթի սահմանադրականությունը վիճարկելու, մասին ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

2.Դիմողին ազատել պետական տուրքի վճարման պարտականությունից:

Նախագահող՝

Անդամներ՝